ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՄԵԾ ՅՕԲԵԼԱՆԻ ՏՕՆԱԿԱՐԳԸ

I

Էջմիածնում

1) Ուրբաթ, հոկտ. 11-ին, եր. ժ. 5 ին Նորին Վեհափառութիւնը պատգամաւորների և ամբողջ միաբանութեան ուղեկցութեամբ՝ հանդիսաւոր թափօրով իջնում է Մայր Տաճար՝ ներկայ լինելու ս. Թարգմանչաց յիշատակին կատարուելիք նախատօնակին։

2) Շաբաթ, ս. Թարգմանչաց տօնին, հոկտ. 12-ին, առ. ժ. 8-ին հանդիսաւոր երթ Նորին Վեհափառութեան Տ. Տ. Գէորգ Ե. Կաթողիկոսի Օշական՝ ուղեկցութեամբ ամբողջ միաբանութեան և պատգամաւորների։

Պատարագ (ժ. 10-ին) ս. Մեսրոպի գերեզմանի վրայ։

Հոգեհանգիստ գրի և տպագրութեան վաստակաւորների յիշատակին. պատգամաւորների բանախօսութիւններ։

Ճաշ (ժ. 2-ին). ուղերձների ընթերցում։

3) Կիրակի, հոկտ. 13-ին, ժ. 9-ին, Մայր Տաճարի Իջման սեղանի վրայ հանդիսաւոր պատարագ և ապա հայրապետական մաղթանք։

Պատարագից յետոյ՝ ժ. 12-ին ճեմարանում ցերեկոյթ երգեցողութեամբ և երաժշտութեամբ։

Ճաշ՝ ժ. 3-ին, հեռագիրների ընթերցում։

Շաբաթ և կիրակի երեկոները ժ. 7-ին և երկուշաբթի առ. ժ. 10-ին ճեմարանում գիտական բեֆերատներ և խորհրդակցութիւն ուղղագրութեան խնդիրների շուրջը։

Նշում.—Շաբաթ և կիրակի երեկոները երաժշտութիւն և հրավառութիւն վանքի և ճեմարանի բակում։

II

Հայոց բոլոր թեմերում

1) Շաբաթ, հոկտ. 12-ին, ս. Թարգմանչաց տօնի օրը, եկեղեցական դասի, դպրոցական ամբողջ կազմի և ազգային հաստատութիւնների ներկայացուցիչների և աշակերտութեան ներկայութեամբ՝ հանդիսաւոր պատարագ և բացատրութիւն երկու մեծ տօների պատմական նշանակութեան։

Հոգեհանգիստ գրի և տպագրութեան արուեստի վաստակաւորների յիշատակին։

2) Կիրակի. հոկտ. 13-ին, հանդիսաւոր պատարագ և ապա հայրապետական մաղթանք նոյն կազմով։

Նոյն օրը, տեղական պայմաններին

նայելով, կազմակերպել գրական և թարգմանական ցերեկոյթ կամ երեկոյթ՝ եկեղեցական, կրթական և այլ ազգային հաստատութիւնների պաշտօնատար անձանց ներկայութեամբ։ Հանդէսը բանալ «Հայր մեր»-ով և ս. Թարգմանչաց կամ Էջմիածնի շարականով։

Ծանօթ.—Շատ եկեղեցիներ ունեցող կենտրոններում եկեղեցական հանդէսները՝ կարող են կատարվել մէկ կամ մի քանի եկեղեցիներում տեղական հոգեւոր վարչութեան կարգադրութեամբ։

* * *

Այս ծրագիրը կազմված է յատուկ Էջմիածնին ենթակայ հաստատութիւնների համար։ Միւս բոլոր հաստատութիւններից խնդրում է պատուել այս համազգային մեծ տօնը պատշաճաւոր հանդէսներով և յաւերժացնել բարենպատակ ձեռնարկութիւններով։